Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2021-2023

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2021

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը, և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի և առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Համաշխարհային բանկը յուրաքանչյուր տարի հրապարակում է «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը (այսուհետ՝ Զեկույց), որի նպատակն է 190 երկրներում գնահատել գործարար միջավայրում ուղղակի ազդեցություն ունեցող կարգավորումները:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում մի շարք էական բարեփոխումներ են իրականացվել, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև Համաշխարհային բանկի գնահատումներում:

Համաշխարհային բանկի կողմից 2019 թվականին հրապարակված՝ «Գործարարությամբ զբաղվելը 2020» զեկույցի համաձայն՝ Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը:

Էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման աշխատանքները մշտապես գտնվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Նշված գործընթացի բարելավման ուղղությամբ հանձնաժողովը, համագործակցելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, 2011 թվականից սկսած մի շարք փոփոխություններ է իրականացրել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացմանն առնչվող իրավական ակտերում, որոնք հիմք են հանդիսացել Զեկույցի «Էլեկտրական ցանցերին միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը:

«Գործարարությամբ զբաղվելը 2020» զեկույցի «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքը նվազել է 13 կետով՝ 17-ից իջնելով 30-րդ հորիզոնականը: Սա պայմանավորված է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայում իրականացվող շուրջ 350 մլրդ դրամ ծավալով ներդրումային ծրագրով: Նշված ներդրումային ծրագրի շրջանակում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների ծավալը կազմում է ծրագրի 65%-ը: Ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում կատարել անխուսափելի պլանային ընդհատումներ, որոնք առայժմ կարող են բացասական անդրադառնալ վերոնշյալ ցուցիչի գնահատականի վրա:

Ծրագրի իրականացման արդյունքում գրեթե կրկնակի կկրճատվեն հոսանքազրկումների քանակը և տևողությունը, կբացառվեն լարման շեղումները, կներդրվեն էլեկտրամատակարարման ընդհատումների ավտոմատ մոնիթորինգի և վերականգնման համակարգեր, որը հետագայում իր դրական ազդեցությունը կունենա «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով ՀՀ դիրքի բարելավման վրա:

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման միջոցառումների շրջանակում արդեն իսկ իրականացվել էին որոշակի քայլեր և համապատասխան իրավական ակտերով սահմանվել էին դրույթներ, որոնք ուղղված էին մինչև շուկայի ամբողջական կանոններն ընդունելը ընկած ժամանակահատվածում անցումային կարգավորումներով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մասնակիցների պայմանագրային հարաբերությունները և շուկայի կանոնները կանոնակարգելուն՝ ստեղծելով անհրաժեշտ դաշտ վերջիններիս բնականոն գործունեության համար: 2019 թվականին հանձնաժողովն ընդունել է էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության մեծածախ շուկայի առևտրային և ցանցային կանոնները, Հայաստանի Հանրապետության մանրածախ շուկայի կանոնները, մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնցով ստեղծվել են էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և մրցակցային շուկայի բաղադրիչների ներդրման համար համապատասխան իրավական և տնտեսական նախադրյալներ, հստակեցվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային հարաբերությունները (այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության ապահովման մեխանիզմի ներդրման, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առանձին սեգմենտներում սակագնային կարգավորման և գների ձևավորման), էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման գործառույթների տարանջատմամբ պայմանավորված էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային հարաբերությունների (այդ թվում՝ նոր մատակարարների ընտրության և վերջիններիս հետ հարաբերությունների) կանոնակարգման և դրանց հետ կապված գործընթացներով, ինչպես նաև շուկայի մասնակիցների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը: Նշված փաստաթղթերը ուժի մեջ են մտնելու 2021 թվականի փետրվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկությամբ և վերջինիս ու Հանձնաժողովի միջև քննարկումների արդյունքներով Հանձնաժողովն ընդունել է մի շարք որոշումներ, որոնցով սահմանվել են վերականգնվող էներգետիկայի ոլորտում, մասնավորապես արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով լիցենզիաների տրամադրման և սակագնային քաղաքականության իրականացման հիմնական կարգավորումները՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացմանը և հնարավորություն ընձեռելով ներդրողներին ակտիվորեն ներգրավել համապատասխան ներդրումային նախագծերին: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր 10 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ արդեն իսկ հանձնվել են շահագործման, իսկ մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների

գումարային հզորությունը 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար սահմանվել է 200 ՄՎտ:

Հիմք ընդունելով 2018թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100Ն օրենքի պահանջները և հաշվի առնելով ՀՀ կառավարության 14.09.2018թ. №1010-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի» դրույթները, մշակվել են ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները և համապատասխան պայմանագրերի ձևերը:

Իրականացվել են էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների վերանայման աշխատանքները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, ճշգրտվել են փոքր հիդրոէլեկտրակայաններից և վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացները կրում են պարբերական բնույթ և իրականացվում են յուրաքանչյուր տարի:

Փոփոխություններ են իրականացվել «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N397Ա որոշմամբ հաստատված «Վեոլիա Ջու» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում, ինչպես նաև իրականացվել են «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից վարձակալության պայմանագրային 2-4-րդ տարվա համար ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրման, խմելու ջրի ծավալների մոնիթորինգի իրականացման աշխատանքներ և սահմանվել են համապատասխանաբար 2018-2020թվականների հունվարի 1-ից ուժի մեջ մտած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) սակագները:

Հանձնաժողովի կողմից սահմանվել են «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի այլընտրանքային սակագնային փաթեթները:

Ներդրումային ծրագրերի հաստատման և փաստացի կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվության վերլուծության մասով 2017-2019 թվականների ընթացքում շարունակվել են էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման, ներդրումային գործունեության արդյունքների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանների վերլուծության գործընթացները:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ասպիճանական ազատականացմանն ուղղված միջոցառումների շրջանակում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N1010-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի 3.2, 4.4 և 5.3 կետերի համաձայն՝

- *էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման արդյունքում շուկայի նոր մասնակիցների՝ էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի և էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիաներ ունեցող անձանց ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով վերջիններիս համար մշակվել են հանձնաժողով ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների ձևեր:*
- *հաստատվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ծրագրի աջակցությամբ մշակված և «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները, որով նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և արդյունավետ աշխատանքը, հաղորդման համակարգի բաց, թափանցիկ և ոչ խտրական հասանելիությունն ու օգտագործումը, ինչպես նաև կարգավորել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկայում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց փոխհարաբերությունները:*
- *հաստատվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները, որով նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցի զարգացման պլանավորումը, բաշխման ցանցի օպերատիվ կառավարումը, էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումն ու կարգավարումը, բաշխման ցանցին նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերի, նոր հզորությունների միացմանն առնչվող հարաբերությունները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները:*

2018-2020 թվականների ընթացքում.

ՀՀ տարածքում հանրային ամրակցված և շարժական հեռախոսակապի ու լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ բոլոր բնակավայրերում հասանելի են լարային և անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները, ինչպես նաև ՀՀ բոլոր բնակավայրերն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի 2G և 3G տեխնոլոգիաների ծածկույթով, իսկ բնակավայրերի շուրջ 90 տոկոսը՝ 4G+ տեխնոլոգիաների ծածկույթով:

2019 թվականին հանձնաժողովն իրականացրել է 800ՄՀց և 1800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների հատվածների օգտագործման թույլտվությունների տրամադրման մրցույթներ, որոնց արդյունքում բացի 2 500 000 000 դրամ ՀՀ պետական բյուջե կատարված մուտքից, ՀՀ բնակավայրերում մեկ տարվա ընթացքում կապահովվի շարժական կապի ցանցի 4G+/LTE-A տեխնոլոգիայի հիման ***վրա առնվազն մեկ օպերատորի*** *100* ***տոկոս*** *և* ***երկու օպերատորի*** *փոխադարձ ներթափանցելի առնվազն 80* ***տոկոս ծածկույթ****, իսկ հետագայում ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի տեսքով պետական բյուջե կփոխանցվի տարեկան լրացուցիչ 840 000 000 դրամ գումար՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի գծով տարեկան մուտքերը հասցնելով շուրջ 8 միլիարդի:*

2017-2019 թվականների ընթացքում 1-ական դրամով աստիճանաբար նվազեցվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական և ամրակցված կապի ցանցերի միջև կիրառվող փոխկապակցման ծառայությունների վճարները՝ դրանք հասցնելով 7,4 դրամի (առանց ԱԱՀ), իսկ 2019 թվականի հունիսի 1-ից՝ 5 դրամ/րոպե (առանց ԱԱՀ-ի):

Հանձնաժողովը շարժական հեռախոսակապի օպերատորներին իրենց անհատական հանրային շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում, իսկ ամրակցված հեռախոսակապի օպերատորներին՝ իրենց անհատական հանրային ամրակցված կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում ճանաչել է գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ և նշված գործընթացների հիման վրա կարգավորել փոխկապակցման վերջնավորման վճարները:

Մասնավորապես, հանձնաժողովը ղեկավարվելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով հանձնաժողովին վերապահված իրավասություններով, 2019 թվականի դեկտեմբերին հաստատեց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան, որի արդյունքում նշված մեթոդիկայի հիման վրա հանձնաժողովի համապատասխան որոշումներով սահմանվեցին 2020 թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա հանրային ամրակցված և շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարները՝ շարժական կապի ցանցերի համար՝ 3,93 դրամ՝ (առանց ԱԱՀ-ի), իսկ ամրակցված ցանցերի համար՝ 0,96 դրամ (առանց ԱԱՀ-ի):

2019 թվականին Արցախի Հանրապետությունում ՀՀ և ԱՀ շահագրգիռ պետական մարմինների և շարժական կապի օպերատորների մասնակցությամբ անցկացված համատեղ քննարկումների արդյունքում՝ ԱՀ և ՀՀ կապի օպերատորների միջև գործող ռոումինգ ծառայության սակագները նվազեցվեցին, մասնավորապես՝ 2019 թվականի օգոստոսի 1-ից ԱՀ-ում «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի ելքային և մուտքային զանգերի համար գործող 45 դրամ/րոպե սակագինը հավասարեցվեց «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից կիրառվող հետևյալ սակագներին՝ 38 դրամ/րոպե ելքային զանգերի համար, 25 դրամ/րոպե մուտքային զանգերի համար, իսկ sms կարճ հաղորդագրությունների համար գործող 60 դրամ սակագինը փոխարինվեց 40 դրամ սակագնով:

Այնուհետև 2019 թվականի սեպտեմբերի 6-ին ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան», «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ու «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև ռոումինգի ծառայությունների և փոխկապակցման վճարների սակագների վերաբերյալ: Հուշագրով նախատեսվեց 2020 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը նվազեցնել Արցախում և Հայաստանում օպերատորների կողմից մատուցվող ռոումինգի ծառայությունների սակագները:

Արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից՝

- *ելքային զանգերի սակագները կնվազեն շուրջ 25%-ով, այնուհետև 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ նվազումը կհասնի 30%,*
- *մուտքային զանգերինը՝ շուրջ 40%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 45%,*
- *տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայություններինը՝ շուրջ 50%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 65%,*
- *կարճ sms հաղորդագրություններինը՝ շուրջ 65%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 75%:*

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հուշագրով ձեռք բերված պայմանավորվածությունը՝ հանձնաժողովի որոշմամբ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում սկզբնավորված զանգերի ՀՀ շարժական

և ամրակցված հեռախոսակապի օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում վերջնավորման փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների կիրառման ժամանակացույցը, որի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից, յուրաքանչյուր տարի աստիճանաբար կնվազեցվի «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» ու «Յուքոմ» ընկերությունների շարժական կապի ցանցերի, շարժական ու ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարները՝ 2025 թվականի հունվարի մեկից հետո այն սահմանելով 5 դրամ/րոպե (առանց ԱԱՀ):

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Կարգավորվող բնագավառների (համակարգերի) իրավական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Հանձնաժողովը իրավական ոլորտի կարգավորման կատարելագործման գործընթացում որդեգրած քաղաքականության իրականացման սահմաններում 2021 թվականի ընթացքում շարունակելու է հետամուտ լինել կարգավորվող ոլորտների իրավական ակտերի լրամշակման աշխատանքներին:

Հանձնաժողովը, մասնավորապես, մասնակցելու է կարգավորման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի, իրավական ակտերի և այլ փաստաթղթերի մշակմանը, կատարելագործմանը և իրականացմանը:

2021-2023թթ. ևս շարունակվելու են աշխատանքներն իրականացվող սակագնային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, հաշվի առնելով 2020թ շուկայի կառավարման ծրագրի թեստավորման արդյունքները, կլրամշակվեն ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները և համապատասխան պայմանագրերի ձևերը:

2021-2023թթ. կշարունակվեն իրականացվել էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների վերանայման աշխատանքները, կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

2021-2023թթ. նախատեսվում է իրականացնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից վարձակալության պայմանագրային հաշվետու տարվա համար ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրման, խմելու ջրի ծավալների մոնիթորինգի իրականացման աշխատանքներ և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) սակագների սահմանման աշխատանքներ:

Մատակարար-սպառող հարաբերություններում բաժանորդների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքում՝ սպառողներին մատուցվող ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով 2021 թվականին կլրամշակվեն էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:

էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական կայունություն և առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 100% վճարումներ ապահովելու նպատակով 2021 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել իր կողմից ներդրված հատուկ հաշվի մեխանիզմի բնականոն աշխատանքը՝ երաշխավորելով արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարումը:

Հանձնաժողովը հետևելու է 811-821ՄՀց և 852-862ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման մրցույթի արդյունքում տրամադրված թույլտվության պայմաններով ամրագրված պարտավորությունների՝ մասնավորապես, թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում հանրային շարժական կապի LTE Advanced/4G+ տեխնոլոգիայի ծածկույթով չապահովված ՀՀ բնակավայրերի առնվազն 12%-ը, և երկու տարվա ընթացքում ՀՀ բնակավայրերի առնվազն 80%-ը լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթով ապահովման աշխատանքների պատշաճ կատարման ընթացքին, որը արդյունքում կապահովվի հանրային շարժական կապի նոր սերնդի տեխնոլոգիաների ենթակառուցվածքների հասանելիության բարձր ցուցանիշ՝ ՀՀ բնակավայրերում առնվազն մեկ շարժական կապի ցանցի 4G+/LTE-A տեխնոլոգիայի հիման վրա 100 տոկոս ծածկույթ:

Բացի այդ, նկատի ունենալով, որ արդիականացված CDMA տեխնոլոգիայի կիրառմամբ մատուցվող լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները լիովին չեն բավարարում ՀՀ մարզերում ինտերնետի նկատմամբ սպառողների աստիճանաբար աճող տեղեկատվական պահանջները, հանձնաժողովը նախատեսում է 2500ՄՀց տիրույթի համապատասխան հատվածի օգտագործման կազմակերպմամբ զարգացնել ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությունը, հաշվի առնելով նշված տիրույթի կիրառմամբ առավել արագագործ ինտերնետ ծառայությունների մատուցման հնարավորությունները:

Հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտի զարգացման միջազգային միտումները, հանձնաժողովի նախաձեռնությամբ նախատեսվում և շարունակվելու են քննարկումները ՀՀ շահագրգիռ պետական մարմինների հետ շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ներդրման և դրա համար անհրաժեշտ 700 ՄՀց և 3500 ՄՀց ռադիոհաճախականությունների ազատականացման հարցերը:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովը շարունակելու է աշխատանքները Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված և շարժական կապերի նոր տեխնոլոգիաների ցանցերի փոխադարձ ներթափանցելիության և լայնաշերտ ինտերնետ հասանելիության, այդ թվում՝ ՀՀ մարզերում հանրային ամրակցված լայնաշերտ կապի ենթակառուցվածքների և ծառայությունների հասանելության ցուցանիշների բարձրացման ուղղությամբ:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման Եվրոպական միության փորձը, ինչպես նաև ՀՀ և ԵՄ միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամրագրված հանձնառությունները՝ հանձնաժողովը նախատեսում է նախաձեռնել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, մասնավորապես՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ:

Միաժամանակ, հաշվի առնելով հանրային ամրակցված և շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ հանձնաժողովը 2020-2023 թթ. ընթացքում ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում նախատեսում

է մասնակցել նաև ենթակառուցվածքների քարտեզագրման մշակմանն ուղղված աշխատանքներին: ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում նախատեսվում են նաև կարգավորող մարմինների անկախության ամրապնդմանը, էլեկտրոնային հաղորդակցության շուկաների վերլուծությանը, ԵՄ արևելյան գործընկերության երկրների տարածաշրջանում միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելուն, ինչպես նաև միջազգային ռոումինգ ծառայության սակագների նվազեցմանն ուղված աշխատանքներ:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամետը	
Սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց համար գործունեության միատեսակ պայմանների ստեղծում	*1064 հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում*	*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագրի կատարման վերաբերյալ գործունեության հաշվետվության հրապարակում*	*1*	*Յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, մամուլում հրապարակվում է նախորդ տարվա գործունեության հաշվետվությունը*			

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ծախսային գերակայությունները բխում են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանված հանձնաժողովի նպատակներից.

- *սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռում,*
- *կարգավորվող անձանց համար գործունեության միատեսակ պայմանների ստեղծում.*
- *նպաստում մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը,*
- *խթանում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:*

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1064	11001	հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում	հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում	Հանձնաժողովի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցեր կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: Հանձնաժողովի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման տարրերի (բացառությամբ աշխատավարձի ֆոնդի և հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին ուղղվող հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով գումարի) սահմանում է հանձնաժողովը:	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 16-րդ հոդվածներ
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					
	31001	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում	Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի ձեռքբերում		

	31002	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	Մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում		

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրականացնում է միայն մեկ ծրագիր՝ «Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում», որն իրենից ներկայացնում է հանձնաժողովի պահպանման ծախսերի ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակում իրականցվում են երեք միջոցառումներ՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում: Ծրագիրն ուղղված է նպաստելու ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթների իրականացմանը:

Հավելված** N1-**ի 1-ին և 2-րդ աղյուսակները**, **հավելվածներ** N3-**ը և** N4 **կցվում են:

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2019թ փաստ. (հազ. դրամ)	2020թ սպասվող (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)	2023 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
1064		*հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում*	X	X	X	785432.0	842907.7	852553.0	859152.2	865604.2
	11001	*հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում*	01	06	01	771673.3	838548.9	834569.3	843798.5	850250.5
	31001	*հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում*	01	06	01	13758.8	4358.8	2983.7	15353.7	15353.7

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2019թ փաստ. (հազ. դրամ)	2020թ սպասվող (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)	2023 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
	31002	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	01	06	01			15000.0		

4.3. Նոր նախաձեռնությունները

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ծախսային նոր նախաձեռնություններ չի նախատեսում:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հավելված N 8. Բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերը՝ վարչատարածքային բաժանմամբ (ըստ մարզերի)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորումները տարածվում են ամբողջ Հայաստանի Հանրապետության վրա, հետևաբար մարզային բաշխում չի ներկայացվում:

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	2019թ փաստ. (հազ. դրամ)				2020թ սպասվող (հազ. դրամ)				2021թ բյուջե (հազ. դրամ)				2022 թ բյուջե (հազ. դրամ)				2023 թ բյուջե (հազ. դրամ)			
		Ընդամենը	Ք. Երևան	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	Ք. Երևան	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	Ք. Երևան	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	Ք. Երևան	<Մարզի անվանումը>	...	Ընդամենը	Ք. Երևան	<Մարզի անվանումը>	...
1064	*հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում*	785432.0				842907.7				852553.0				859152.2				865604.2			

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	2019թ փաստ. (հազ. դրամ)				2020թ սպասվող (հազ. դրամ)				2021թ բյուջե (հազ. դրամ)				2022 թ բյուջե (հազ. դրամ)				2023 թ բյուջե (հազ. դրամ)			
			Ընդամենը	*Ք. Երևան*	*<Մարզի անվանումը>*	*...*	*Ընդամենը*	*Ք. Երևան*	*<Մարզի անվանումը>*	*...*	*Ընդամենը*	*Ք. Երևան*	*<Մարզի անվանումը>*	*...*	*Ընդամենը*	*Ք. Երևան*	*<Մարզի անվանումը>*	*...*	*Ընդամենը*	*Ք. Երևան*	*<Մարզի անվանումը>*	*...*
	11001	*հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում*	771673.3				838548.9				834569.3				843798.5				850250.5			
	31001	*հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում*	13758.8				4358.8				2983.7				15353.7				15353.7			
	31002	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում									15000.0											

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին ծրագրեր չի իրականացնում:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 18-րդ հոդվածների՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պահպանման ծախսերի մեծությունը ձևավորվում է հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով, իսկ հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որն էլ նախատեսում է աշխատավարձի բնականոն աճ, հետևաբար հանձնաժողովի 2021-2023թթ. պահպանման ծախսերի մեծությունը համապատասխանաբար աճում է:

Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

Աղյուսակ 1. Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2021-2023 թթ համար

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Ծրագրի/միջոցառման անվանումը	Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (-)			Նոր նախաձեռնությունները (հազ. դրամ) (+)			Միջոցառման գծով ամփոփ ծախսերը (հազ. դրամ)		
Ծրագիր	Միջոցառում		2021թ	2022թ	2023թ	2021թ	2022թ	2023թ	2021թ	2022թ	2023թ	2021թ	2022թ	2023թ
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1064		*հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում*	834569.3	843798.5	850250.5							834569.3	843798.5	850250.5
	11001	*հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում*	834569.3	843798.5	850250.5							834569.3	843798.5	850250.5
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
Հայեցողական ծախսերին դասվող այլ միջոցառումներ														
1064		*հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում*	17983.7	15353.7	15353.7							17983.7	15353.7	15353.7
	31001	*հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում*	2983.7	15353.7	15353.7							2983.7	15353.7	15353.7
	31002	*հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով*	15000.0									15000.0		

		ապահովվածության բարելավում												

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2021-2023թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2020թ. պետական բյուջեի և 2020-2022թթ. ՄԺԾԾ հետ

(հազար դրամներով)

	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
1. Պետական մարմնի գծով 2020-2021 ՄԺԾԾ-ով հաստատված և 2023թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	820995.2	833107.7	865604.2
2. <<ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները	842907.7	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2021-2023 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	852553.0	859152.2	865604.2
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2021-2023 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	852553.0	859152.2	865604.2
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X			
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X			
4. Տարբերությունը ՀՀ 2020թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2)	X	9645.3	16244.5	22696.5
5. Տարբերությունը 2020-2021 ՄԺԾԾ-ով հաստատված և 2023թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	31557.8	26044.5	0